

ԳՐԻԳՈՐԻԱՍ ԱՂԹԱՄԱՐՑԻՆ ԻՔՐԻՆՎ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ
ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՅ» ԴԵՊՐԻ ԿԱՅԱՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Միջնադարյան հայ հեղինակներին նվիրված այլևայլ ուսումնասիրություններում XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղթամարցին, իրավամբ, ներկայանում է իբրև մի բազմաշնորհ արվեստագետ, որը միաժամանակ գրադվում էր և՛ գրական-ստեղծագործական աշխատանքով, և՛ նկարչությամբ, և՛ գրչությամբ:

Այլ հարց է, թե մասնագետների կողմից նրա գործունեության ո՞ր կողմն է առավել ամբողջական տեսքով ներկայացվել և որը՝ սոսկ ուրվագծվել: Պետք է նկատել, որ համեմատաբար մանրախույզ քննության է ենթարկված Գ. Աղթամարցու բանաստեղծական վաստակը: Ընդհանուր առմամբ ճշգրտված է բանաստեղծի գրչից ելած տաղերի թիվը և գնահատանքի խոսք է ասված նրանց մասին:

Այսուհանդերձ, մինչև օրս պատշաճորեն չի բարձրացված մեծ տաղերգուի գրական գործունեության ըստ ամենայնի կարևոր մի հատվածը, որին Գ. Աղթամարցին նվիրաբերել է իր կյանքի օչ սակավ տարիները: Այստեղ նկատի ունենք միջնադարյան Հայաստանում տարածում ունեցող Աղեքսանդր Մակեդոնացու և Պղնձե քաղաքի թարգմանական պատմությունները սկաֆառ կոչված երգերով հարստացնելու ուղղությունը Ե. Աղթամարցու ծավալած հետևողական աշխատանքները:

Ուսումնասիրողներից ոմանք Գ. Աղթամարցու առնչությունը այդ գրույցների հետ տեսնում են սոսկ իր իսկ հորինած կաֆաների մեջ, ուրիշները փորձում են այդ շրջանակն ընդլայնել՝ բանաստեղծին վերագրելով նաև նշված երկերի թարգմանության կամ խմբագրության աշխատանքները: Դրան հակառակ, նորագույն առանձին ուսումնասիրություններում որոշ փորձեր են արվում կասկածի տակ առնելու Աղեքսանդրի և Պղնձե քաղաքի կաֆաների համապատասխան մասի՝ Գ. Աղթամարցու սեփական ստեղծագործություն լինելու հանդամանքը: Ըստ որում, հայտնված կարծիքները գերակշռող մասով բանասիրական խոր պրպտումների արդյունք չեն հանդիսացել և կրել են թուուցիկ դիտողությունների բնույթ:

Դեռևս 1882 թ., Արիստակես վարդ. Տնկանցը լույս հայտարարությամբ Գ. Աղթամարցուն է վերագրում Պղնձե քաղաքի պատմության հորինումը²: 1912 թ., Շավարշ վարդ. Սահակյանը, ի հաստատումն այդ հայտարարության, հրապարակ է հանում մի հիշատակարան, ուր Ե. Աղթամարցին հիշատակվում է իբրև Պղնձե քաղաքի պատմության «լուսածող»: Երա հիման վրա էլ, նա Գ. Աղթամարցուն է վերագրում թարգմանության և բոլոր կաֆաների հորինման գործը, գրելով. «մենք կրնանք Գրիգորիս կաթ. Աղթամարցին ճանչնալ իբրև թարգմանիչ «Պղնձե քաղաքին» և հեղինակ անոր կաֆաներուն...»³:

Անհամեմատ ծանրակշիռ փաստերի վրա է դրվում կաֆաների քննությունը հայ մատենագրության խորհամուտ գիտակ Հ. Տաշյանի «Ուսումնասիրությունք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի» ուսումնասիրության մեջ⁴: Իր եզրահանգումների համար կիրառելով ձեռագրական

1 Կ. Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը, Թիֆլիս, 1898: Մ. Պոտուրյան, Գրիգորիս Աղթամարցի, «Բազմավէպ», 1905, էջ 491—500: Ն. Ակինյան, «Հանդէս ամսօրեայ», 1915, էջ 18—65, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958: Գ. Հովսեփյան, Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, էջ 1—18, «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 41—61: Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1946, հ. 2-րդ, էջ 410—417: Մ. Ավդալբեգյան, Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963:

2 Տնկանց, Հայերդ, Թիֆլիս, 1882, էջ ԺԴ:
3 Շ. Սահակյան, Գրիգորիս կաթ. Աղթամարցի. Պղնձե քաղաքի թարգմանությունը, Տաճար, 1912, էջ 595—596:
4 Հ. Տաշյան, Ուսումնասիրությունք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892:

տարբեր տվյալների բաղդատության արդյունավետ եղանակը, Տաշյանը հիշատակում է թվով 11 կաֆա, որոնց հեղինակ է համարում Գ. Աղթամարցուն: Ավելին, ըստ կաֆաների առկայության, նա Աղեքսանդրի պատմության իրեն հայտնի ձեռագիր օրինակները խմբավորում է նախակեղանոսյան, կեղանոսյան, գրիգորիսյան և գաբարյան խմբագրությունների, որով և կրկին հավաստում է տարբեր բանաստեղծների, այդ թվում նաև Գ. Աղթամարցու գործոն մասնակցությունը Պատմությունը կաֆաներով կենդանացնելու գործին:

Վեց տարի անց՝ 1898 թ., Կ. Կոստանյանցը Թիֆլիսում հրատարակ է հանում Գ. Աղթամարցու կյանքին և գործունեությանը նվիրված մի ամփոփ ուսումնասիրություն⁵, ուր Աղեքսանդրի պատմության կաֆաների հեղինակներ Գ. Աղթամարցին, Խ. Կեղանցին նշված են Տաշյանի աշխատության մեջ եղած տվյալների ուղղակի կրկնությամբ:

Քննարկվող հարցի վերաբերյալ հանդես է եկել նաև մեր միջնադարյան արվեստի վաստակաշատ մասնագետ Գ. Հովսեփյանը⁶: Աղեքսանդրի պատմությունը միջնադարյան ընթերցողին պատշաճ տեսքով մատուցելու Գ. Աղթամարցու ջանքերը արժեքավորելիս, նա ընդգծում է վերօրինիս կատարած երկկողմանի աշխատանքը: Հայտնի է, որ տաղերգուն, կաֆաներ գրելուն զուգընթաց, Պատմությունը նկարագրող է համապատասխան պատկերներով: Նման մի օրինակ է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի N 473 ձեռագիրը, որն իր նկարագրողումների շնորհիվ դնահատվում է իբրև «իր տեսակի մեջ հնագույն և աշխարհիկ բովանդակության ձեռագրերից մեկը»⁷: Այս բոլորով հանդերձ, նա առաջնությունը տալիս է բանաստեղծական երկերին, նկարչականը դիտելով իբրև մի օղակ՝ Գ. Աղթամարցու դիմապատկերն ամբողջացնող գործոնների շղթայի մեջ: Չեն անտեսված նաև Պղնձե քաղաքի կաֆաները, որոնց հեղինակային պատկանելիությունը էշտորոշելու Գ. Հովսեփյանի առաջադրած եղանակները, թեև որոշ դեպքերում առարկելի, սակայն, ուշադրության արժանի շատ բան են պարունակում:

Աղեքսանդրի պատմության համար Գ. Աղթամարցու հորինած կաֆաները որոշելու փորձ է արել և Ն. Մովականը՝ «Սիոն» ամսագրի 1953 թ. համարներում հրատարակելով տաղերգուին վերագրվող որոշ կաֆաներ: Թեպետ հեղինակը նկատում է, որ իբրև հիմք վերցված է Երուսաղեմի Նույն՝ N 473 ձեռագիրը, սակայն, պարզվում է, որ նշված կաֆաների մոտ կեսը քաղված են զանազան, անդամ XIX դ. կեսերին ընդօրինակված այլ ձեռագրերից, որոնց տվյալների հավաստիությունը (հեղինակության առումով) տարակուսելի է: Ավելին, N 473 ձեռագրում Գ. Աղթամարցու անունով եղած որոշ կաֆաներ նա, ինչ-ինչ նկատառումներով, մտցրել է Խ. Կեղանցու կաֆաների շարքի մեջ: Ապա, մեզ անհայտ հաշվումներից ելնելով, Ն. Մովականը, իր ներկայացրած 67 կաֆաները դիտում է իբրև գրիգորիսյան բոլոր կաֆաների մոտավորապես մեկ երրորդը: Իրերի ներկա վիճակը, սակայն, հիմքեր չի տալիս կաֆաների այդչափ մեծ քանակ վերագրելու Գ. Աղթամարցուն:

Կաֆաների ուսումնասիրման տեսակետից կարևոր ներդրում պետք է համարել նաև Ն. Ակինյանի՝ Վիեննայում, 1958 թ. հրատարակած «Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի» մեծարժեք մենագրությունը: Այստեղ հեղինակը մատենագիտական բազմաթիվ և բազմատեսակ արժեքավոր տվյալներ է հրատարակ հանում՝ Պղնձե քաղաքի և Աղեքսանդրի պատմության բնագրերի թարգմանության, թարգմանիչների, կաֆաների հեղինակների, ինչպես և այդ գործերի հրատարակությունների վերաբերյալ:

Աղեքսանդրի և Պղնձե քաղաքի պատմությունների հետ Գ. Աղթամարցու գրական-ստեղծագործական առնչությունների մասին ընդհանուր խոսք ունի նաև Մ. Ավդալբեգյանը իր «Գրիգորիս Աղթամարցի» հատորի լչերում: Այստեղ համեմատաբար մանրամասն է նկարագրված Գ. Աղթամարցու և Մարգարե Արճիշեցու համատեղ աշխատանքը՝ Աղեքսանդրի պատմության գրչության և նկարագրողման գործում: Չեռքի տակ շունենալով բավարար չափով համապատասխան ձեռագրեր, հատկապես Երուսաղեմի N 473 ձեռագիրը և Հ. Քյուրտյանի օրինակը, հեղինակը հնարավորություն չի ունեցել անհրաժեշտ խորությամբ քննելու կաֆաների հարցը: Այդ առիթով նա գրում է. «Թերևս անհնարին չլիներ որոշ չափով կողմնորոշվել նաև Գրիգորիս Աղթամարցուն պատկանող կաֆաների հարցում, եթե մեր ձեռքի տակ լինեին 1526 և 1536 թվականներին Մարգարե Արճիշեցու գրչագրած և Գրիգորիսի նկարագրողած ձեռագրերը, որտեղ, ըստ տվյալների,

⁵ Կ. Կոստանյանց, Գ. Աղթամարցին և իր տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 108:

⁶ Գ. Հովսեփյան, «Արարատ», 1919, էջ 3—40, «Հանդիս ամսօրեայ», 1930, էջ 41—61:

⁷ Նույն տեղում, էջ 8: 1919, էջ 8:

կան նաև Աղթամարցու կաֆաները: Դժբախտաբար, այդ ձեռագրերն առայժմ մեզ անմատչելի են... ուստի Աղեքսանդրի պատմութեան գրիգորիսյան կաֆաների մասին առայժմ ոչինչ որոշակի ասել չենք կարողոյս:

Գր. Աղթամարցու կաֆաների վերաբերյալ վերջին խոսքը պատկանում է ամերիկահայ բանասեր Հ. Քյուրտյանին, որը «Հանդէս Ամսօրեայում» հրատարակեց մի հաղորդում «Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցի կաֆաները «Պատմութիւն մեծի աշխարհակալին Աղեքսանդրու Մակեդոնացոյ մէջ» վերնագրով⁹: Հաղորդումն արված է այս գործին օգնելու նպատակով իրեն ուղղված մի նամակի առիթով: Մեծարգո բանասերը այստեղ բարեխղճորեն տալիս է իր անձնական գրադարանում պահույնը, Գր. Աղթամարցու և Մ. Արճիշեցու 1526 թ. կազմած Աղ. Մակեդոնացու պատմութեան ձեռագրի գիտական նկարագրութիւնը, հատկապես կանգ առնելով նրանում առկա գրիգորիսյան ինքնագիր և ինքնաստեղծ կաֆաների, ինչպես նաև որոշ կարևոր հիշատակարանների վրա: Հրատարակումն արժեքավոր է նրանով, որ ներկայացված կաֆաները, հեղինակային պատկանելութեան իմաստով, անվարանելի են և կարող են ձեռագրական այլ տվյալների համադրմամբ որոշակի եզրակացութիւնների հիմք հանդիսանալ:

Այսպիսով, տեսնում ենք, որ Գ. Աղթամարցին, իրրև կաֆաների հեղինակ, զբաղեցրել է մի շարք ականավոր բանասերներով: Այսուամենայնիվ, հարկ է նշել, որ թիւ 3-ին լուծում պահանջող շարքերը և, որ ամենակարևորն է, մինչև օրս չի ճշտված Գ. Աղթամարցու գրչից ելած կաֆաների մտաւոր քանակը, չի կատարված նրանց գրականագիտական վերլուծութիւնը, մի բան, որը խորապես կնպաստեր բանաստեղծի գրական կերպարը լրիվ բացահայտելուն:

Այդ թերին լրացնելու ձգտումով, փորձ ենք արել, ձեռագրական տվյալների և մատենագիտական վկայութիւնների օգտագործմամբ, վեր հանել Աղեքսանդր Մակեդոնացու և Պղնձե քաղաքի պատմութիւնների կաֆաների հորինման գործում Գ. Աղթամարցու կատարած աշխատանքի ընդհանուր և ամփոփ պատկերը: Տեղի սղութեան պատճառով այստեղ տպագրութեան ենք հանձնում մեր ուսումնասիրութեան լոկ Աղեքսանդր Մակեդոնացու պատմութեան հետ առնչվող մասը, այլ առիթի թողնելով Պղնձե քաղաքի պատմութեան կաֆաներին վերաբերող քննութիւնը:

Մատենագրական վկայութիւնները հավաստում են, որ բանաստեղծը մեկ անգամ չէ, որ գիմել է Աղեքսանդրի առասպելախառն վարքագրական վեպին:

Առաջին անգամ Աղեքսանդրի պատմութեան հետ կապված աշխատանքների առնչութեամբ Գ. Աղթամարցու անվանը հանդիպում ենք 1526 թվականին, երբ նա հառաքատա վանքում պատրաստում է Պատմութեան՝ ճշգրտված, լրացված և բաղմամբիվ կաֆաներով ու ճոխ նկարներով հարստացված մի ընտիր օրինակ: Այդ մասին մանրամասնորեն հիշատակում է Հ. Քյուրտյանի վերևում նշված ձեռագրի գրիչ Մարգարե Արճիշեցին իր հիշատակարանում. «...Գրեցաւ ի թվին 22 ի դուռն Սուրբ Աստուածածնիս հառաքատայ, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մարգարայ վարդապետին... Ընդ նմին, յիշեցէք ի Քրիստոս զԳրիգորիս կաթողիկոսն Աղթամարցի, որ զօրինակն շնորհեց, զոր ստուգեալ և սրբագրեալ էր ինքն բազում աշխատութեամբ ի սխալ յարինակէ և ասացեալ ի յառատ մտացն բէթ: Թող դայն, որ վանգով և երկու վանգով պակաս էր՝ զթերին ելից, վասն որոյ յիշման արժանի արասցիք զինքն՝ իւր ծնաւորքն, ամէն: Եւ զծագկազիրն անձանձիր ուսոյց ծառայիս և զգիրս նկարեց: Ով որ ի ձեռն առնու կարդալով կամ հարաւանցի տեսնելով. դաստուած ողորմին մի՛ խնայեսցէ Գրիգորիս կաթողիկոսին և անարժան զծողիս»¹⁰:

Պետք է նկատել, որ այս հիշատակարանը 1526 թ. վերահիշյալ ձեռագրից կամ նրանից կատարված մի այլ օրինակից 1868 թ. արտագրվել է, ապա հրատարակվել Բ. Սարգսյանի կողմից¹¹, որին ծանոթ են եղել ն. Ակինյանը և ուրիշներ:

Մեջբերված հիշատակարանից ստուգապես հայտնի է դառնում (ինչպես նկատել է նաև ն. Ակինյանը)¹², որ Գ. Աղթամարցին

8 Մ. Ավդալբեգյան, Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 327:
9 «Հանդէս Ամսօրեայ», 1967, № 10—12, էջ 423—433:
10 Հ. Քյուրտյան, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցի կաֆաները «Պատմութիւն մեծի աշխարհակալին Աղեքսանդրու Մակեդոնացոյ մէջ», Հանդէս Ամսօրեայ, 1967, № 10—12, էջ 424:
11 Բ. Սարգսյան, Տուրակ հայերէն ձեռագրաց... ի վեներտիկ, 2-րդ հատ., էջ 1097:
12 «...Աղեքսանդրի վեպի իսկական լուսածողն պետք է նկատել Գրիգորիս Աղթամարցին, որ հաշատուրեան խմբագրութեան իր տրամադրութեան տակ եղած օրինակին աղճատուած կաֆաները սրբագրեց եւ լրացուց եւ անոնց թիր ճոխացուց նոր կաֆաներով, բաց աստի նկարա-

ա) Ձեռքի տակ ունենալով Պատմության մի սխալաշատ օրինակ, այն ստուգել է և սրբազրել:

բ) Եղած կաֆաները ամբողջական տեսքի է բերել լրացնելով պակասող մեկական կամ երկուական վանկերը:

գ) Կաֆաների թիվն ավելացրել է իր իսկ հորինած կաֆաներով:

դ) Պատրաստի օրինակը նկարագարողն է համապատասխան մանրանկարներով:

ե) Մարգարե Առճիշեցի գրչին սովորեցրել է ծաղկելու արվեստը:

Այս օրինակը բազմաթիվ փորձությունների է ենթարկվել: Դեռևս իր ստեղծման ժամանակ նրա հետ կապված աշխատանքների մի մասը ինչ-ինչ պատճառներով դադարեցվել է: Գրչի թողած որոշ վկայություններից պարզ է դառնում, որ Գր. Աղթամարցին հնարավորություն չի ունեցել իր նպատակագրածը լիովին իրագործել: Անպատասխան են թողնվել Մարգարե Առճիշեցու որոշ խնդրանք-գրությունները՝ կապված ձեռագրի նկարագարման և կաֆայավորման հետ, և, ինչպես Հ. Քյուրտյանն է հայտնում, կաֆաների համար նախատեսված շատ տեղեր ձեռագրում այնպես էլ թափուր են մնացել: Այսպիսի մի անկատար խնդրանք է հետևյալը. «Մաղիկ հան, դինչ որ կու ասէ եւ բէթ մի այլ սոսայ, հոգեւոր տէր»¹³, որից հետո գալիս է կաֆայի համար հատկացված դատարկ տեղը: Իսկ հետագայում, ձեռագրից անջատվել և անհետ կորել են նկարագարող և երգեր սյարունակող բազմաթիվ թերթեր:

1536 թվականին Գ. Աղթամարցին կրկին անդրադառնում է տաս տարի առաջ իր իրազործած այդ աշխատանքներին: Այսպես ասելու հիմք է տալիս Երուսաղեմի № 473 ձեռագիրը, որի պարունակած Աշխատանքի պատմությունը կաֆաներով («բեյթերով») հարստացված է Գ. Աղթամարցու կողմից: Վերջինս նկարագարողն է նաև այդ օրինակը, որը, սակայն, իր ավարտին չի հասցրել: Այն գրված է Վարագում և ընդօրինակված դարձյալ Մարգարե Առճիշեցու կողմից: Թեպետ ձեռագիրը կամ նրա միկրոթապավենը շունենք մեր տրամադրության տակ, սակայն, դանազան աղբյուրներ (առանձնապես Ն. Պողոթյանի կազմած Երուսաղեմի ձեռագրաց ցուցակու՝ առկա տվյալները և ձեռագրի՝ Գ. Հովսեփյանի հանգամանալից նկարագրությունը) հնարավոր են դարձնում որոշ հավաստի տվյալներ քաղել Գ. Աղթամարցու գործունեության առանձին կողմերի, հատկապես այդ ձեռագրի ստեղծման հանգամանքների վերաբերյալ¹⁴: Այսպես, պարզ է դառնում, որ գործակիցները (Գ. Աղթամարցին և Մարգարե Առճիշեցին) գտնվելիս են եղել տարբեր, սակայն ոչ շատ հեռու վայրերում: Ընդ որում, Մարգարե Առճիշեցին արդեն պատրաստի էջերն ուղարկած է եղել Գ. Աղթամարցուն՝ նկարագարողն և համապատասխան կաֆաներ դետեղելու համար: Բնակսնարար, ձեռագրի այդ դեգերումների ընթացքում նրա մեջ ավելացել են և նամակ-հիշատակագրություններ՝ ուղղված Մարգարե գրչից Աղթամարցուն և Աղթամարցուց՝ Մարգարե գրչին: Հայտնի է դառնում նաև, որ հիմնական դերը այս աշխատանքներում, իբրև կաթողիկոսի և կաֆաների ու նկարագարողումների հարցին լավատեղյակ անձնավորության, պատկանել է Գ. Աղթամարցուն, որի դիտողությունները մեծ ակնածանքով է հաշվի առել Մարգարե գրչը. «Յայսմ վայրի էի, յորժամ եկաւ տէր Յովանէսն՝ մեր հոգևոր եղբայրն ի Հոգևոր Տերնն և ասաց մեղաւորիս, թէ յոյժ մեղադրեաց քեզ Հոգևոր Տէրն բէթերուն, որ ի հետ կշտի արճըծած (հավանարար՝ արճըծած — Հ. Ս.) խաշին կու գրես: Ես մեղայ, աստից ի յետ դինչ Հոգևոր Տիրի հրամանքն է, թող էնց լինի»¹⁵:

Մեկ-երկու ակնարկից պարզվում է նաև, որ Պատմության այս օրինակը ստեղծվել է մեկ այլ օրինակի փոխարեն, որի վրա, ինչպես կարելի է ենթադրել, Գ. Աղթամարցին և Մ. Առճիշեցին աշխատել են սիրով ու նվիրումով, որից, սակայն, հետո զրկված են եղել: Դա երևում է հատկապես Մարգարե գրչի հետևյալ տողերից. «Ո՛վ քաջ հոգևոր և անյաղթ ֆիստփայ հոգևոր տէր. հա՛ն զքաղաքն զՍքանդարեայ հրաշագեղ և ահարկու տեսլեամբ, հրաշագարդ և երանգ-երանգ գունեով, որպէս վայել է քոյին սուրբ տէրութեանդ. միթէ առաջին գրոց սուգն փարատի ի խոց սրտէս ի քո ծառայէս»¹⁶: «Առաջին գրոց սուգ» դարձվածքն, անշուշտ, նկատի ունի Աղեքսանդրի պատմության մեկ այլ օրինակ, որի մասին, դժբախտաբար, լրացուցիչ տեղեկություններ

զարգեց դայն անձամբ բազմաթիւ մանրանկարներով»: Տե՛ս Ն. Ա կ ի ն յ ա ն, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի, Վիննա, 1858, էջ 4է:

13 «Հանդէս Ամսօրեայ», 1967, № 10—12, էջ 426:

14 Ն. Պ ո ղ ա թ յ ա ն, Ցուցակ ձեռագրաց Ս. Հակոբեանց, Գ, էջ 205, Գ. Հ ո վ ո ս փ յ ա ն, Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, էջ 11:

15 Ն. Պ ո ղ ա թ յ ա ն, Ցուցակ ձեռագրաց Ս. Հակոբեանց, Գ, Երուսաղեմ, 1956, էջ 208:

16 Անդ, էջ 205:

չունենք: Աղթամարցու հիշյալ երկու ինքնագրերում առկա որոշ փաստերի քննութիւնը ենթադրել է Մալխոս, որ 1536 թ. օրինակը կազմելիս Գր. Աղթամարցին իր տրամադրութեան տակ չի ունեցել 1526 թ. օրինակը, քանի որ առաջինի կաֆաներն ավարտվում են «Ա՛յ իմ միամօր որդեակ» կաֆայով, մինչդեռ ավելի հին օրինակը ունի դրան հաջորդող «Աքանդա՛ր, արքայից արքա» կաֆան, որն ընդօրինակման դեպքում պետք է, որ փոխանցված լիներ նոր ձևագիր: Նույն եղանակով էլ, հին օրինակի 15—17-րդ կաֆաները լիովին բացակայում են Երուսաղեմի ձևագրում: Ուստի, պարզ է, որ վերջինիս նախօրինակը մի բոլորովին այլ, մեզ անծանոթ ձևագիր է եղել:

Աղեքսանդրի պատմութեան հետ Գ. Աղթամարցու գրական առնչութիւնները քննելիս, թերևս ամենակարևոր խնդիրը բանաստեղծի գրչից ելած կաֆաների ճշտորոշումն է: Այս աշխատանքը, սակայն, առայժմ մասամբ անհնարին է, քանի որ անհրաժեշտ ձևագրերի մի մասը, աշխարհի տարբեր գրապահոցներում ցրված լինելու պատճառով, մեզ մատչելի չեն: Մյուս դժվարութիւնն այն է, որ Գ. Աղթամարցու անունով կաֆաները ձևագրերում միշտ չէ, որ հանդես են գալիս նրա անվան հիշատակումով: Այսուհանդերձ, ձեռքի տակ ունենալով Մատոցի անվան Մատենադարանի թվով բավականին մեծ ձևագրերը և որոշ տեղեկութիւններ՝ արտասահմանում գտնվող ձևագրերի վերաբերյալ, մենք կաշխատենք հնարավորութեան սահմաններում ծանոթանալ քննվող հարցին:

Բնական է կարծել, որ կաֆաների հեղինակների հարցը քննելիս նախապատվութիւնը պետք է տալ ձևագրերում առկա համապատասխան նշումներին, որոնք մեզ հայտնի ամենահավաստի տեղեկութիւններն են: Սակայն ներկա պայմաններում, երբ բազմաթիւ ընդօրինակումների ընթացքում գրեթե լիովին խախտված է բնագիր ներմուծված կաֆաների նախնական թիվն ու հաջորդականութեան կարգը, այդպիսի նշումների նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել զգուշութիւն: Այս պարագաներում բացառիկ արժեք են ուսանում վերոհիշյալ երկու օրինակները, գրված 1526 (Հ. Քյուրտյանի անձնական օրինակ) և 1536 (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի № 473) թվականներին, որոնց կարևորութիւնը նշել են կաֆաներին անդրադարձող գրեթե բոլոր բանասերները: Հատկապես մեծ դեր ունի Երուսաղեմի № 473 ձևագիրը, որի կաֆաները նախորդի համեմատությամբ շատ են և, որ կարևորն է՝ ամբողջական: Գ. Հովսեփյանը, 1919 թ. «Արարատ»-ում հրատարակած Գ. Աղթամարցու կյանքին և գրական գործունեութեանը նվիրված իր արժեքավոր հոդվածում, բացահայտելով այդ ձևագրի բացառիկ դերը մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ, գրում է. «Աղթամարցու կաֆաների որոշման համար այս օրինակն ունի հատուկ արժեք, տարաբախտաբար ժամանակին այդ խնդրով չէինք հետաքրքրված, ուստի և մեր այնտեղ եղած ժամանակ (1911 թ.) նկատողութեան շնորհիւ առել այն բոլոր կաֆաները, որոնք լուսանցքում նշանակված են Գրիգորիսի անունով: Համենայն դեպս, այդ ձևագիրը նախազարգայան ի օրինակ է և այդտեղ, բացի և. Կեչառեցու և Գ. Աղթամարցու անունների համառոտագրութիւններից, ուրիշները չկան, թեև բնագրին կից կան և ուրիշ կաֆաներ»¹⁷: Բանասերը միևնույն ժամանակ շեշտում է ձևագրում առկա տվյալների կարևորութիւնը հատկապես Աղեքսանդրի պատմութեան խմբագրութիւնները որոշելու (կեչառեցյան, գրիգորիսյան, զաքարյան) և դրանց հիման վրա էլ տարբեր հեղինակների կաֆաները զանազանելու հարցում: «Երուսաղեմի ձևագիրն ազատ է Ձաքարիայի ներմուծութիւններից և և Կեչառեցու վերջաբան հիշատակարանի մեջ, ուստի և այս օրինակը արժանի է հատուկ ուշադրութեան կաֆաների հեղինակների ուսումնասիրութեան տեսակետով»¹⁸:

Որոշումների ընթացքում, բարեբախտաբար, գտնվեցին մեզ հետաքրքրող կաֆաները, ընդօրինակված նույն՝ երուսաղեմյան ձևագրից: Կաֆաների ընդօրինակութիւնը կատարել է Մեսրոպ վարդապետ Նշանյանը՝ հայագետ Արշակ Չոպանյանի պատվերով, որն այժմ պահվում է ՀՍՍՀ ԳԱ գրականութեան և արվեստի թանգարանի՝ Արշակ Չոպանյանի արխիվում:

Սրանով իսկ, այժմ, փաստորեն առաջին անգամ, հնարավորութիւն է ստեղծվում որոշակի խոսք ասել Աղեքսանդրի պատմութեան համար Գ. Աղթամարցու հորինած կաֆաների մի մասի վերաբերյալ, հիմք ընդունելով 1526 թ. և հատկապես 1536 թ. բանաստեղծի անմիջական մասնակցութեամբ ստեղծված ձևագրերի հեղինակային ինքնագիր վկայութիւնները:

Պարզվում է, որ Գ. Աղթամարցու հեղինակած կաֆաների թիվը Երուսաղեմի ձևագրում հասնում է 36-ի, որոնք բոլորն էլ լուսանցքներում ունեն «Գրիգորիս» նշումը: Ահա այդ կաֆաների սկզբնատողերի լրիվ ցանկը՝ հերթական հաջորդականությամբ.

17 Գ. Հովսեփյան, Գրիգորիս Աղթամարցի, «Արարատ», 1919, էջ 8:

18 Անդ:

- | | |
|------------------------------|---------------------------------|
| 1. Տեսանելի զծերն նահանջման | 19. Դարեհ յիմ արիւնս անկաւ |
| 2. Ա՛յ ծեր, դառնացեալ ողի | 20. Իմ մեղքն յըղացաւ ինձ շար |
| 3. Յառաջն հրաման երեստ | 21. Դու ըզքեզ մեծ կարծէիր |
| 4. Արքայն, որ հրաման երեստ | 22. Աեսոնքուսիս աշխարհակալ |
| 5. Իրք որ զՄելամպոս բերին | 23. Այս Աեսոնքուսիս արքայ |
| 6. Երբոր ի մեհեանն եմուտ | 24. Գազանքն յանտառէն ելին |
| 7. Նախարարդ շրայտ ւ յիմար | 25. Դէմքն էր այլ այլադէմք նոցին |
| 8. Այսօր փոխարեն ատնեմ | 26. Այս են գազանքն, որ յանտառին |
| 9. Հոգորն Աղէկսանդր դրեաց | 27. Կենդանի այլ շենք լրսել |
| 10. Կարի թէ անմիտ էք դուք | 28. Ութ կանգնեայ հընկից շափով |
| 11. Այս Պարմենիոն իշխանս | 29. Նախախնամութիւն վերին |
| 12. Հիւանդին աստուած է դեղ | 30. Այլ ուրախ կաց ու խընդայ |
| 13. Դեսպանդ, որ երեկ | 31. Ինձ անձ ուժ ու թև պիտէր |
| 14. Ա՛յ իմ աննման սուլթան | 32. Դադարեցար Աղէքսանդրէ |
| 15. Անվախ և հըզօր արքայն | 33. Աղղեցէ՛ք ի տուն պարսից |
| 16. Մեծ նախախնամող վերին | 34. Ի գնալդ քո յերկիր հեռի |
| 17. Կանգնեալ ի կառս երիվարաց | 35. Արքայս ի տապան եկեալ |
| 18. Թագուր, պատեհ չէ իսկի | 36. Ա՛յ իմ միամօր որդեակ |

Դ. Աղթամարցիին այս կաֆաների մի մասը հորինել է զատ-զատ՝ Պատմութեան զանազան դրվագներին առնթեր, իսկ մյուս մասը՝ կաֆայախմբերով, շղթայված թեմատիկ ընդհանրութեամբ։ Ընդ որում, յուրաքանչյուր միավոր լուսանցքում կրում է հեղինակի անվան սղապրութիւնը՝ «Գր»։ Կաֆայախմբերն էլ (14—20, 29—30, 31—36-րդ կաֆաները) դրանից բացի, ունեն ընդհանուր խորագրեր՝ նորից Գրիգորիս անվան հիշատակումով։ Այսպես, առաջին խմբի խորագիրն է. «Եւ ասաց Իմեղորոս զկաֆայս ի Գրիգորիս կաթողիկոսէ», երկրորդ խմբինը՝ «Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ», և երրորդինը՝ «Ի Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ ի յարքայէ բերնէն»։ Անկասկած, այդ վերնագրերի առկայութեան շնորհիվ էլ հետագա ընդօրինակումների ընթացքում կաֆաների նշված փնջերը, գրիչների կողմից գիտակցվելով իբրև մի ամբողջութիւն, հիմնականում, մնացել են անբաժանելի, դերձ՝ օտարամուտ կաֆաներից։ Մի բան, որ ցարդ նկատված չի եղել և ինքնին ուշագրավ երևույթ է կաֆաների ուսումնասիրութեան տեսակետից։

Վերոնշյալ կաֆաներից 9-ը (4, 5, 7, 9, 11, 14, 21, 31, 36-րդ կաֆաներ) նույն՝ Աղթամարցու անունով արդեն կան 1526 թ. օրինակում։ Մնացած 27 կաֆաների մասին պիտի ենթադրել, որ նրանք հիմնականում գտնվելիս են եղել այժմ պակասող էջերում։ Սրանցից զատ, 1526 թ. օրինակում կան «Գրիգորիս» նշումը կրող ևս 12 կաֆաներ, որոնք լիովին բացակայում են Երուսաղեմի ձեռագրում և պետք է ավելացվեն վերոհիշյալ շարքին իբրև բուն գրիգորիսյան կաֆաներ։ Ահա դրանց սկզբնատողների ցանկը.

- | | |
|----------------------------|--------------------------------|
| 1. Աւձու հասիաթն է շատ | 7. Աղէքսանդր յայտնի ասաց |
| 2. Երանի այն մարն ասեմ | 8. Աւաղ դիմ աւուրքս ու զկեանքս |
| 3. Մայրն միամիտ կարծէր | 9. Զորութիւն բազկիս բարձաւ |
| 4. Աստուած հոգիդ արարչական | 10. Իմ սննդակից եղբարք |
| 5. Հմուտ մոզական հնարից | 11. Մարք մանկազունեց, լացէ՛ք |
| 6. Արքայն ընդ նոսա ասաց | 12. Սրանդա՛ր, արքայից արքա |

Ինքնուրույն կաֆաների քննութիւնը ցույց է տալիս, որ Գր. Աղթամարցիին այս դեպքում ևս կիրառել է կաֆաների տեղարարչաման նույն սկզբունքը՝ զատ-զատ և խմբավորումներով։ Հերավի, ի տարբերութիւն մյուսների, 8—10-րդ կաֆաները խմբված են ընդհանուր «Գրիգորիս» վերնագրի տակ։

Այսպիսով, առկա տվյալներով կարելի է հաստատապես պնդել, որ Գր. Աղթամարցիին հորինել և Պատմութեան բնագիր է ներմուծել 48 կաֆա։

Այժմ տեսնենք, թե Դր. Աղթամարցու ձեռագրերում եղած կաֆաների համադրութեամբ ի՞նչ պատկեր են ներկայացնում Մաշտոցի անվան Մատենադարանի համապատասխան ձեռագրերը։ Աղէքսանդր Մակեդոնացու պատմութեան ձեռագրերը Մատենադարանում հասնում են երեք

տասնյակի: Սրանք գրեթե բոլորն էլ ունեն Գ. Աղթամարցու կաճանները, այլ կերպ ասած, գրի-գորիսյան խմբագրութիւնը կրած ընդօրինակումներ են¹⁹:

Այդուհանդերձ, խնդրո առարկա կաճանների հեղինակային պատկանելութիւնը ոչ բոլոր ձե-ռագրերում է լրիվ նշված: Կան միայն 8 ձեռագրեր, որոնցում առկա են «Գրիգորիս» նշում ունե-ցող կաճաններ. վերջիններս էլ, սակայն, քանակով տարբեր են: Այսպես, № 1865 ձեռագիրն ունի «Գրիգորիսի» 13 կաճան, № 5472-ը՝ 6, 6451-ը՝ 9, 7677-ը՝ 10, 8003-ը՝ 6, 8482-ը՝ 21, 8689-ը՝ 7, 9601-ը՝ 10: Պետք է ասել, որ Նրուսաղեմի № 473 ձեռագրի գրիգորիսյան 36 կա-ճաններից 24-ի նշումները հաստատվում են Մաշտոցի անվան Մատենադարանի տարբեր ձեռա-գրերի նշումներով: Այդ կաճաններն էն՝ վերոհիշյալ ցանկի 3—7, 9, 11, 13—20, 27, 29—36-րդ միավորները: Մնացած 12 կաճաններից 11-ի հեղինակն ավանդող մեզ հայտնի միակ աղբյուրը դարձյալ մնում է Նրուսաղեմի № 473 ձեռագիրը: Իրենց հերթին, 1526 թ. օրինակի գրիգորիսյան 21 կաճաններից 17-ը (2, 4, 6—11, 13—21-րդ) համապատասխան նշումներ ունեն Մատենա-դարանի որոշ ձեռագրերում:

Ասվեց, որ կաճայախմբերը իրենց ամբողջական տեսքը պահպանել են հիմնականում առան-ձին վերնագրերի տակ ամփոփված լինելու շնորհիվ: Այդ են հաստատում Մատենադարանի որոշ ձեռագրեր: Օրինակ, առաջին խմբի (14—20-րդ) կաճանները նույն վերնագրով և նույն հաջորդա-կանութիւնով առկա են № № 1865, 7677, 9601 ձեռագրերում, ինչպես նաև Փարիզի Ազգային մատենադարանի № 291 ձեռագրում: Նույնը պետք է ասել և երկրորդ կաճայախմբի (29—30-րդ) մասին, որը Գ. Աղթամարցու անունն է կրում Մատենադարանի № № 6451, 7677 ձեռագրերում. իսկ № 8003-ում ունի «ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ առ ճշմարիտ աստուածն մէր» մի փոքր այլ խորագիրը: Վկայակոչելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 90 ձեռագրի համապատասխան տվյալները, Հ. Տաշյանն այդ երկու կաճանները համարում է Գրիգորիսի գրչից էլած²⁰: Նրուսաղեմի ձեռագրի գրիգորիսյան երրորդ խմբավորման (31—36-րդ) կաճանները նույն վերնագրով առկա են Մատենադարանի № № 1865, 6451, 8003 (կաճանների թերի կազմով) ձե-ռագրերում, ինչպես նաև Փարիզի № 291 ձեռագրում²¹: Նշված խմբավորման 1, 3—5-րդ կաճա-նները Գ. Աղթամարցու անունով են եղել և Կ. Կոստանյանցին պատկանող մի ձեռագրում, որից նա կաճաններ է հրատարակել իր «Գրիգորիս Աղթամարցի» ուսումնասիրութիւնի մեջ:

Այսպիսով, պետք է եզրակացնել, որ կաճանների քննված խմբերը այլ ձեռագրերում բա-վականին հետևողականորեն կապվում են Գ. Աղթամարցու՝ իբրև հեղինակի անվան հետ, վերա-հաստատելով Նրուսաղեմի № 473 ձեռագրի անվարանելի վկայութիւնները:

Վերոհիշյալ կաճաններից զատ, Մատենադարանի ձեռագրերում պատահում են Գ. Աղթամար-ցու անվամբ պահպանված մի շարք ուրիշ կաճաններ, որոնք բացակայում են գրիգորիսյան ինքնա-գրերում: Ահա դրանք՝ համապատասխան ձեռագրերի համարների նշումով.

1. Ասայ ինձ, ո՞վ ես դու (ձեռագիր № № 5472, 8689)
2. Քան զամպն արեին պայծառ (ձեռագիր № 8482)
3. Ի յաշխարհս ես զուր դատայ (ձեռագիր № 8482)
4. Ընտիր գոված և երեսբախտ (ձեռագիր № 8003)
5. Պայծառ արեգակն ես դու (ձեռագիր № 8003)

Արդ, ինչո՞վ բացատրել, որ Գր. Աղթամարցու ինքնաստեղծ 48 կաճաններից զատ նաև այլ կաճաններ են երևան գալիս Գ. Աղթամարցու անվամբ: Եթե այստեղ թյուրիմացութիւն չկա, ապա պետք է մտածել, որ Գ. Աղթամարցին այդ ձեռագրերից առաջ և հետո գրել է նաև ուրիշ կաճա-ններ, որոնց մի մասը հասել է մեզ:

Մատենադարանի ձեռագրերի շարքում, Նրուսաղեմի 473 ձեռագրի հետ ունեցած իր ընդհա-նուր տեղիներով առանձնանում է № 8482 ձեռագիրը, ընդօրինակված 1714 թ. Տիգրանեցի Մար-

¹⁹ Բանասեր Ն. Ակինյանը նկատում է, որ Պատմութիւն իրեն ծանոթ բոլոր ձեռագրերը «յառաջադայած են գրիգորիսեան խմբագրութենէն», տե՛ս Ն. Ակինյան, Գրիգորիս Ա. կա-թողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 4է:

²⁰ Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 123:

²¹ Գրականութիւն և արվեստի թանգարան, Ա. Զոպանյանի արխիվ:

տիրուսի ձեռքով: Այս օրինակն իրենից ներկայացնում է լուկ Աղեքսանդրի պատմության կաֆաների շարքը՝ քաղված այդ Պատմության որևէ գրչագիր օրինակից: Կաֆաների ընդհանուր թիվն է 282, որոնցից 21-ը՝ «Գրիգորիս» նշումով: Ձեռագիրն ունի մի քանի տասնյակի հասնող մեծ ու փոքր հիշատակագրություններ՝ հար և նման Երուսաղեմի ձեռագրի համապատասխան նշումներին, ըստ որում, պետք է նկատել, որ դրանք հաճախ բառացի նույնություն են ցուցաբերում, հանգամանք, որն ապացուցում է քննարկվող երկու ձեռագրերի կապը:

Գոյություն ունեն մատենագրական այլ փաստեր, որոնք գումարվելով վերը բերվածներին, ավելի քան անտարակուսելի են դարձնում միջնադարյան զրույցների առնչությամբ Գ. Աղթամարցու ծավալած գործունեության նպատակադրումը, հետևողական և խորապես գիտակցված լինությամբ: Բանաստեղծի գրչից են ելել Պղնձե քաղաքի պատմության կաֆաների մի մասը: Այդ իրողությունը հաստատող վկայություններից է Պղնձե քաղաքի ձեռագիր ընդօրինակություններում (№ N 5622, 10329 և այլն) պահպանված հիշատակարանը.

Ձլուսածուղ Պատմութեան Պղնձէ քաղաքիս՝
Ձկաթուղիկուն Գրիգորիս,
Յիշեցէ՛ք, աստուած ողորմիս,
Ձեղկելիս, մեղօք գերիս,
Քառասուն երեք սար ու չումլայ,
Ոտանաւոր ողբ կայ ի սմայ,
Յանիմաստէս դրեալ ի սայ,
Մտացդ ձեր յաճոյանայ...22:

Նույնը հաստատվում է և ձեռագրի գրիչ Գրիգոր քահանայի ավելացրած տողերով. «Ո՛վ էղբարք, յորժամ ընթեռնուք զպատմութիւնս և զուարճանայք, յայնժամ զիմաստուն կաթողիկոսն պտէր Գրիգորիսն յիշեցէք և աստուած ողորմի ասացէք նմայ, զի աշխատեցաւ ի հետ սորայ և ն'ջ ողբ յիւրմէն ասեալ ի սայ, թեղ զայն, որ զերկու վանկն և զմէկն ինքն է արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր ընդ նմին...»23:

Թե տաղերգուն որոշակիորեն երբ է իրագործել Պղնձե քաղաքի կաֆաների հորինման աշխատանքը (Աղեքսանդրի պատմության հետ իր անելիքները ավարտելուց հետո, թե՛ առաջ), այժմ դժվար է ասել: Արժեքավորը, սակայն, այստեղ նորաստեղծ կաֆաների կոնկրետ թվի (43) նշումն է, թեպետ և նրանք առանձին-առանձին մատենացույց չեն արված:

Ինչպես տեսնում ենք, կաֆաների հետ Գ. Աղթամարցու ունեցած ստեղծագործական առնչությունները եղել են անհամեմատ ընդգրկուն ու բազմապիսի և դուրս են եկել Պատմությունը լուկ նորաստեղծ կաֆաներով հարստացնելու ռահմաններից: Համոզվելու համար բավական է համադրել Աղեքսանդրի պատմության և Պղնձե քաղաքի համապատասխան հիշատակարանները:

Հիշալի, պարզվում է, որ գրական երկու հուշարձանների մեջ Գ. Աղթամարցու կողմից կաֆաների ներշնչումն աշխատանքի երբ գրեթե նույն ուղիով են ընթացել: Այսպես, երկու հիշատակարաններն էլ սկսվում են նմանօրինակ մշտնապատ դարձվածքներով՝ «...զոր ստուգեալ և սրբագրեալ էր ինքն՝ քաղում աշխատութեամբ ի սխալ յարիս: Կէ...» (Աղեքսանդրի պատմ.) և «...զի շատ աշխատեցաւ ի հետ սորայ...» (Պղնձե քաղ. պատմ.), որոնք պետք է ընկալել իբրև ակնարկ Գ. Աղթամարցու՝ հիշյալ զրույցների խմբագրման որոշ աշխատանքների վերաբերյալ: Այնուհետև, երկու հիշատակարաններն էլ անդրադառնում են կոնկրետ՝ Գ. Աղթամարցու հորինած կաֆաներին՝ «...յասացեալ ի յառատ մտացն ըէթ...» (Աղեքսանդրի պատմ.) և «...ն'ջ ողբ յիւրմէն ասեալ ի սայ...» (Պղնձէ քաղ. պատմ.): Եվ, վերջապես, երկուսն էլ ավարտվում են Գ. Աղթամարցու ստեղծագործական ազդերը բացահայտող տողերով՝ «...թող զայն, որ վանգով և երկու վանգով պակաս էր՝ չիմերին ելից...» (Աղեքսանդրի պատմ.) և «...թող զայն, որ զերկու վանկն և զմէկն ինքն էր արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր ընդ նմին...» (Պղնձե քաղաքի պատմ.): Մասնավորապես այս վերջին կետը պահանջում է հատուկ ուշադրություն, մասնավանդ, որ բանասերները մինչև օրս լուրջությամբ են անցել նրանց կողքով:

Այստեղ որոշակիորեն զգացվում է, որ տաղերգուն իրենից առաջ եղած կաֆաները լրացրել է

22 Մաշտոցի անվ. մատենագրան, ձեռ. № 5622, Թ. 54բ:
23 Անտ. Թ. 55ա:

մեկ-երկու վանկով, որոնք, ինչպես երկու դեպքում էլ շեշտվում է՝ «պակասում էին» հին կաֆաներում: Ինչպե՞ս հասկանալ այս վկայության միտքը: Ն. Ակիւնյանը թուուցիկ ակնարկել է, թե Գ. Աղթամարցին «խաշատուրեան օրինակին աղճատուած կաֆաները սրբագրեց եւ լրացուց»²⁴: Բայց մի՞թե նման աշխատանք է աչքի առաջ ունեցել վերոհիշյալ գրիչը:

Այստեղ, թվում է, ակնարկվում է բոլորովին այլ բան: Պակասող վանկերի հավելումը դիտված է իբրև ստեղծագործական աշխատանք: Բնական է ենթադրել, որ Գ. Աղթամարցին պակասող վանկերն ավելացրել է տաղաչափական նկատառումներով՝ պատմությունների բնագրում առկա բանաստեղծական խոսքում՝ կաֆաներում միօրինակությունն ու ընդհանրությունը ապահովելու ձգտումով: Ժամանակի ողիւն ըմբռնած նշանավոր ստեղծագործողի համար, նման գործում, կարծում ենք, որ շափանիչ պետք է հանդիսանային հայրեններն՝ իրենց 7—8 վանկանի տաղաչափությամբ: Գ. Աղթամարցին ինքը հայրենների շափի կիրառության բաղմամբ օրինակներ է տալիս և՛ իր առանձին տաղերում, և՛ կաֆաներում: Աղեքսանդրի և Պղնձե քաղաքի պատմությունների՝ նրա հորինած բոլոր կաֆաները հյուսված են հայրենային տաղաչափությամբ: Հավանաբար, նույն այդ սկզբունքով էլ նա խմբագրել է տարբեր շափերով գրված հին կաֆաների դեթ մի մասը: Նման աշխատանքն ինքնին ենթադրում է առանձին բառերի և տողերի փոփոխում, հավելում, բնականաբար և առանձին տողերի և կիսատողերի վերաշարադրություն:

Նրե պակասող տողերի կամ վանկերի հավելման փաստը Պղնձե քաղաքի պատմության մեջ կապվում է «բնական ողբերի» հետ, ապա փոքր-ինչ այլ է դրությունը Աղեքսանդրի պատմության մեջ: Նրա հունարեն բնագիրն, ինչպես դիտենք, չի ունեցել կաֆաներ, հետևաբար և այս դեպքում խոսքը գնում է Ե. Աղթամարցուն նախորդած հայ չեղինակների որոշ կաֆաների մասին: Նրանցից մեկ առաջմ հայտնի են Յրիկի և Ն. Կիլանցու անունները: Ենթադրվում է, որ եղել է Աղեքսանդրի պատմության նախագրիգորիսյան շրջանի ուրիշ կաֆագիր չեղինակներ ևս, որոնց անունները դեռևս անհայտ են: Տվյալ դեպքում, բացառվում է Յրիկից առնված կաֆաների վերամշակման հնարավորությունը, քանի որ, նրա անունով հայտնի սակավամբիվ բոլոր կաֆաները Պատմության մեջ վերցված են 7—8 վանկանի (յամբ-անապեստյան) հատուկ շափով գրված նրա «է՛յ, շարխ» հայտնի բանքից: Հայրենի շափով են նույն բանաստեղծի հորինած կաֆաները նաև Փահլույի պատմության մեջ²⁵, ինչ վերաբերում է նախագրիգորիսյան մյուս կաֆաներին, ապա նրանց շարքում հանդիպում են և՛ հայրենի, և՛ ուրիշ շափերով հյուսված կաֆաներ, որոնց մեջ փոքր թիվ չեն կազմում ժողովրդական երգերի նմանությամբ գրվածները: Ընդ այստեղ էլ, անկասկած, պետք է որոնել վանկերի հավելման հնարավորությունը: Ցավոք, Պատմության մինչև օրս երևան բերված կաֆայավոր օրինակները, հիմնականում ընդօրինակված լինելով XVII և հետագա դարերում, արդեն ենթարկված են գրիգորիսյան խմբագրության ազդեցությանը, հետագայում կրելով այլ փոփոխություններ: Անտարակույս, մատենագիտական նոր նյութերը և ապագա հետախուզումները առավել հստակություն կմտցնեն այս հարցում ևս:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Գ. Աղթամարցին չեղինակ է Աղեքսանդր Մակեղոնացու (և Պղնձե քաղաքի) պատմության կաֆաների մի զգալի մասի: Որոշակիորեն նրան պատկանող 48 կաֆաների մասին են վկայում Աղեքսանդրի պատմության կաֆաների՝ բանաստեղծի ինքնագրերը և Մաշտոցի անվան Մատենադարանի տարբեր ձեռագրերը: Վերջիններիցս հայտնի է դառնում տարածման այլ ուղի անցած գրիգորիսյան ևս 5 կաֆա: Գ. Աղթամարցուն են պատկանում նաև Աղեքսանդրի և Պղնձե քաղաքի պատմությունների խմբագրման, մասնավորապես, հին կաֆաների սրբագրման աշխատանքները:

Հնարավոր է, որ աշխարհի տարբեր ծայրերում ցրված հայերեն ձեռագրերից շրջանառության մեջ մտնեն նոր փաստեր, որոնց շնորհիվ Գր. Աղթամարցու գրած կաֆաների այդ թիվը ավելի կընդարձակվի և կճշտորոշվի:

24 Ն. Ակիւնյան, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 44:

25 Այդ մասին մանրամասն տե՛ս Բանբեր Երևանի համալսարանի, 1968, № 1, էջ 185: